

ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2016 հուլիսի 6-ի նիստի

/արձանագրություն 13/

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ֆակուլտետների, ամբիոնների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորման մասին կրթության բարեփոխումների և որակի վարչության պետ Մկրտիչ Ավագյանի հաղորդումը՝

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. ՀՊՄՀ-ում ֆակուլտետների, ամբիոնների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորման մասին հաղորդումը ընդունել ի ղեկավարում,
2. Արձանագրել ֆակուլտետի, ամբիոնի, ՊԴԱ-ի գործունեության որակի վարկանշային գնահատման կարևորությունը ուղղված ՀՊՄՀ-ի զարգացմանը և դրա գործունեության արդյունավետության և որակի բարձրացմանը,
3. Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում
 - քննարկել ֆակուլտետների, ամբիոնների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորման առաջարկվող կարգը և նախանշել կոնկրետ միջոցառումներ դրա իրականացման անաչառության և արդյունավետության ապահովման համար,
 - Մինչև 2016/17 ուսումնական տարվա սկիզբը իրագեկել համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմին վարկանիշավորման մասին, դրա անց կացման խնդիրներին և նպատակներին,
 - Մինչև 2016 թվականի սեպտեմբերի 15-ը ներկայացնել առաջարկություններ և վերջնականացնել վարկանիշավորման գնահատման ձևաչափը, դրա բաղադրիչները, գնահատման միավորային համակարգը,
4. Հանձնարարել Համալսարանի ամբիոններին 2016/17 ուսումնական տարվա առաջին կիսամյակում կազմակերպել և անցկացնել պարբերական ամբիոնի նիստեր, լսել դասախոսների հաշվետվություններ ըստ վարկանիշավորման պահանջների, օժանդակել հավաքագրելու յուրաքանչյուր դասախոսի վարկանիշավորման տվյալները, ստեղծել վարկանիշավորման թղթապանակներ:
5. Հանձնարարել Համալսարանի ֆակուլտետներին և նրանց խորհուրդներին՝

- ՀՊՄՀ-ում ֆակուլտետների, ամբիոնների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորումը դարձնել գերակա խնդիր,անցկացնել աշխատանքային քննարկումներ և խորհրդի նիստեր
 - Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր հաստիների մրցույթների անցկացման ընթացքում,ինչպես նաև դասախոսների բեռնվածքների հաստատման ընթացքում առանձնակի կարևորություն տալ վարկանիշավորման արդյունքներին
6. Հանձնարարել Համալսարանի ուսումնամեթոդական վարչությանը, կրթության բարեփոխումների վարչության մինչև 2016-ի սեպտեմբերի 30-ը վերջնականացնել վարկանիշավորման ձևաչափը, անցկացման մեթոդաբանությունը և տրամադրել ուղեցույց բոլոր ստորաբաժանումներին,
 7. Հանձնարարել Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին
 - Մինչև 2016-ի սեպտեմբերի 20-ը ստեղծել ՀՊՄՀ-ում ֆակուլտետների, ամբիոնների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորման էլեկտրոնային հարթակի ծրագիրը, հնարավորինս ապահովել դրա կապը այլ էլեկտրոնային ռեսուրսների հետ
 8. Հանձնարարել Համալսարանի պրոռեկտորներին
 - Ստեղծել աշխատանքային խմբեր և մինչև ս/թ սեպտեմբերի 15-ը վերնականացնել ՀՊՄՀ-ում ֆակուլտետների, ամբիոնների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորման գնահատման ձևաչափի, դրա բաղադրիչների , գնահատման միավորային համակարգի ձևավորումը ըստ իրենց ենթակայության ոլորտների:
 9. Սույն գործընթացի հսկողության իրականացումը հանձնարարել ՀՊՄՀ կրթական բարեփոխումների և որակի վարչությանը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ռ.Միրզախանյան